

Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Դ Ի Ի Ս Ա Ր Ա Ն

Հ Ա Ն Դ Ի Ս Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

ԳԵՐՄԱՆԱՅԻ ԿՈՒԴՇՄԻՏ ԳԻՏՆԱԿԱՆԻՆ ԽՈՐԵՆԱՅԻՈՅՆ ՎՐԱՅ ԸՐԱՄ ԴԱՏԱՍՏԱՆԸ

(Տես էրես 45, 110, 213)

Մանատրկոյ և Երուանդայ պատմութիւնն ըստ մեծի մասին ռամկին առասպելայօգ վիպասանութիւններով կրկազմուի։ Ափրիկանոսէն ընտրողութեամբ քաղուած մասն՝ Հայոց պատմութեան ամենափոքր կտորն է։ Մովսէսի խարդախելու յանգձնութիւնն ուրիշ տեղ այնպէս յայտնի չըլլար ինչպէս այս տեղ. սակայն չեմ կրնար կարծել որ զԱփրիկանոս 'ի վկայութիւն կոչելն պարզ կեղծիք ըլլայ, որովհետև անոր ժամանակադրութիւնն Մովսէսի ատենն ալ 'ի նպատտ քրիստոնէութեան գործածական գիրք մ'էր, ուստի Մովսէս ոչ միայն կրնար ճանչնալ զայն, այլ և յաւելուածներով գործածել։ Եւ յիրաւի, Մովսէսէն շատ բաներ դուրս պիտի յայտնուին թէ որ ընդունուի թէ ինքը կարողացեր և գործածեր է առ այժմ՝ կորսուած քրիստոնէական. ժամանակագրութիւն մը, որ լատին ծաղկաբաղի մը հետ շատ նմանութիւն ունէր¹։

Խորենացին դեռ աւելի յօժարութեամբ զԵսեբրիոս՝ Ափրիկանոսի հետևողն կը գործածէ. Քրոնիկոնի հայ թարգմանութեան առջի մասին բաղդատութի մ'ալ հաւատտէ՝ թէ Մանթիոնէն, Բիւռոսէն, Աբիւղենոսէն և Բաղմալէպէն ստէպ բերուած վկայու.

գրաւոր արտաքին աղբիւր մը յիրաւի պակասի. թէպէտ ըստ Խորենացւոյն ինչպէս Աբգարունոյնպէս և Մանատրկոյ պատմութեան աղբիւրն Լաբուքենայ է։ Բաւական չէ մեզմէ 1400 տարի կանուխ ապրող նուիրական անձ մը ձախողակի քննադատութեամբ դատափետել իբրև խաղախիլ՝ պարզ արդի ունեցած երկասիրութեամբք. այլ ուղիղ բանն պահանջէ ճանչնալ զմատենագիրն և զգրեալն ամենայն մասամբ։ Ուղիղ քննադատութենէ հարկեալ պէտք է խոստովանիլ թէ Խորենացի 'ի գէպս գէպս պատմութեան՝ յայտնի տգիտանայ և խաբուի, բայց ոչ թէ կամաւ տգիտանայ և ջանայ խաբել։ Եւ թէ մեր Փերմանացի հեղինակն կ'ենթադրէ թէ Խորենացի գիմացն ունէր Excerpta latina barbari դրոց նման քրիստոնէական ժամանակագրութիւն մը, հաւասար ենթադրութեամբ ալ կարծելի է որ այս քաղուածոյքն Ափրիկանոսի անունը կը կրէին, յորում և հայ թարգմաւորաց վրայ ալ անշուշտ տեղեկութիւնք կային։

¹ Մանատրկոյ և Երուանդայ պատմութեան ՊՐԱՎ Գ.

Թիւններն՝ բոլորն առանց բացառու-
թեանն անկէ առնուած են : Բայց Եւ-
սեբեայ Գրոնիկոնն ալ առաւելուն
հանգերձ գործածական է, և անոր
հմտութիւնն ալ ստէպ անյարմար կեր-
պով կը ծախուի. օրինակ իմն, Մովսէս
պատմէ թէ Տրդատ և Վարազդատ ի-
րենց երիտասարդութեան ատեն ողիմ-
պիական խաղուց ասպարիզին մէջ հան-
դիսացան. և Եւսեբիոսէն յիշեալ մրցո-
ղաց ցանկին մէջ զանոնք ալ կ'անցընէ
և յաղթող ալ կ'ընէ քան զկլիտոստրա-
դոս հռոգացի, զԿերաստոս արգիացի
և քան զԲիոնիս լսկեղեմնացի¹ :

Աչքի զարնող է այն պատմութիւնն
ուր ըստ Խորենացւոյն Հայք Պարթևաց
դաշնակից 'ի փոքր Ասիա կ'արշաւեն,
« մինչդեռ Ղուկիանոս (Ղուկիոս) կե-
սար յԱթէնս զմեհնանն շինէր » . (Խո-
րեն. Բ. կդ) : Ամենաման կերպով Եւ-
սեբիոսի Գրոնիկոնին հայ թարգմանու-
թիւնն կը խօսի 217 թուականին.
« Մինչդեռ Ղուկիոս կայսր յԱթէնս
զմեհնանն շինէր, հուր յերկնից յարե-

մտից յարեալ ցոլացեալ երևեցաւ » . այս՝
պարզ թարգմանութեան տղայական
սխալ մ'է, ինչպէս գիտենք Մինկ. եր.
664. ἱεροῦργων ἐν Ἀθῆναις (քահանայա-
գործելով կամ զոհս մատուցանելով
յԱթէնս) :

Թարգմանութեան ուրիշ սխալ մը,
յորում հայ Եւսեբիոսի հետ հաւասար
կ'երթայ Խորենացի, է Աբիւղենոսի վը-
կայութեան մէջ յիշուած յոյն Μεγαστί-
νυς (Մեգասթինէս) մատենագրին ա-
նունն, որ Նաբուգոդոնոսորին ածա-
կան կարծուելով՝ Մեծագոր թարգմա-
նուեր է : Երկու մատենից ոճոյն խիստ
նմանութեան պատճառաւ՝ Մխիթա-
րեանք զԽորենացի Գրոնիկոնին թարգ-
ման կարծեր են : Ստորոգ է. կամ թարգ-
մանն է կամ թէ թարգմանութիւնը
ունէր : Այսպիսի բացայայտ քաղուածի
մը մէջ խիստ օտար է և ամենական
կածելի Եւսեբիոսի Գրոնիկոնին իսպառ-
անյիշատակութիւնն¹ :

Խորենացի զԱբիւղենոս անկէջ միայն
կը ճանչնայ՝ ուսկից առած է. սակայն
իր խօսքին նայելով՝ անանկ գրքէ մը
քաղեր է, որուն ամենեւին անտեղեակ
է Եւսեբիոս : Իբրև հեղինակ հայ նա-
հապետաց՝ ազգահամարին՝ Հայկէն ին-
չուան Արայ Գեղեցիկ, կը կանչէ Խո-
րենացի զԱբիւղենոս մանրամասն ազ-
գահամարաց այն հատուկտիրներու մէջ՝
որոնք արդէն 'ի չքութեան էին² : Յի-
շեալ բառ առ բառ հատուածն ճշգրիտ
նմանողութիւն մ'է Եւսեբիոսի քով
գտնուած Ասորեստանեայց նահապե-
տաց ցանկին՝ ինչուան Նինոս : Կասկածն
կատարեալ ընելու համար՝ հայկական

1 Հարկ չկայ կարծել որ Խորենացի զՏրդատ
և զՎարազդատ ողիմպիական յաղթողաց կարգը
դասէ, այլ պարզապէս նմանութիւն մ'է, որով
հնարի այդ թագաւորաց արտաքոյ կարգի ուժե-
ղութիւնը բացատրել. այս յայտին կ'երևնայ
հեղինակին խօսուածքին կերպէն ալ : « Պատմէ
զնահատակութեանց Տրդատայ, նախ 'ի ման-
կութեանն յերկար կամակար աշտանակեալ,
և կորովի ձիավարեալ, և զէնս շարժեալ յաջո-
ղակարարս. և այլ պատերազմականս ուսանել
սխորժակս. ապա ըստ Պելոպոնէսացւոց մեհե-
նական հրամանին Հիփիոտայ 'ի մրցանակս աղա-
նին առաւելեալ քան զկլիտոստրատոս հռոգա-
ցի, որ զվէն և եթ կալեալ յաղթէր. դարձեալ
և քան զԿերաստոս արգիացի. զի նա զհնչակ ե-
ղեն թափեաց, իսկ սա զերկուց ցլուց վայրե-
նեաց միով ձեռամբ կալեալ զեղէրէն, թա-
փեաց հանգերձ ընդվեալ Զախլախամբ » . (Խո-
րենացի Բ. հԺ) : Բառ առ բառ Գրոնիկոնէն
քաղեր է. « Եւ 'ի մարտին Ղլիտոստրատոս
հռոգացի, որ զվէն և եթ կալեալ յաղթէր » .
(Գրոնիկոն էջ. 301) . և յէջ 298. « Կերաստոս
արգիացի, որ զհնչակ եղեն թափեաց : Իսկ
Վարազդատայ ուժին համար կ'ըսէ. « Վաղեաց
զՆիփրատաւ առաւել քան զԿլիտոսցին Քիո-
նեայ վազել քսան և երկուց կանգնոց չափ » .
(Գ. Խ) : Իսկ Գրոնիկոն կ'ըսէ. « Քիրոնի Լա-
կնապին 'ի ստաղին. որոյ իր վազ՝ էր քսան
և երկու կանգունք » . էջ. 286 :

1 Ամենածանօթ 'գրքէ մը թարգմանարար
դէպք մը քաղելու աստե՛ն թէպէտ սխալ հասկը-
ցողութեամբ՝ ամենածանօթն ծանօթացնելու
հարկ կայ : Թող որ անոնք բարձր վիճակն առ
որս գրէր Խորենացին, ժամանակն և պարագայը
ժամանակին, չէին ներեր Խորենացւոյն զանոնք
աղէտ և գիւսահաւան կարծել :

2 Այսին զի Խորենացի ինքին կ'ըսէ, թէ
« Չայս մեզ Աբիւղենոս յիւրում առաջնում
արձանականի 'ի մանր ազգաբանութեան ատէ :
Զոր աստ ուրեմն յետոյ ոմանք բարձին » (Ա. Խ) :
Կնոյց ըլլալ որ Աւսեբիոսէն վերուցին՝ ինչպէս
կը հասկընայ Գեղամանային :

մասին բոլոր անուանք արեւելեան ձեռնին. նոր թարգմանութիւն մը Մովսէսի ձեռքով անընդունելի է, որովհետեւ Ասորեստանեայց մասին մէջ յունական ձևն պահեր է, ինչպէս իր ընդհանուր սովորութիւնն է: Կորուսեալ ազգահամարի մը վկայն խարդախելն շատ յարմար է խորենացւոյն՝ անոր առ ազնուականս ունեցած սիրոյն նկատմամբ:

Խորենացիին Եւսեբիոսէն առած վկայութիւնէն դուրս կեփաղիոնէն ալ հատուած մ'ունի, զորնայնպէս հայ ազգաբանութիւնը հաւատարմութեամբ, յորոյ 'ի նպաստ արդէն Աբիւղենոս յիշուեցաւ, բառ առ բառ կը բերէ այսպէս: «Այսոցիկ վկայէ և կեփաղիոն. քանզի ասէ 'ի միում գլխոյն այսպէս. Մանր զամենայնսն յիսկզբան մերոյ աշխատութեանս սկսաք գրել զազգարաւութիւնսն 'ի դիւանացն արքունի. այլ առաք հրաման 'ի թագաւորաց' թողուլ զաննշանից և զվատաց արանց 'ի հնոցն զյիշատակն, և գրել միայն ըզքայս և զիմաստունսն և զայխարհակալս նախնիս. և մի յանպէստ զժամանակս մեր ծախել. » (Ա. Ե.):

Ուրեմն ըստ խորենացւոյն կեփաղիոն թագաւորաց ոմանց հրամանաւ և իրենց կողմանէ գրող տարեգրաց օգնութեամբ գրեց, ինչպէս Բիւռոսոս՝ Անտիոքոսի, և Մանեթիոն՝ Պտղոմէոսի հրամանօք իրենց երկրին տարեգիրքն գրեցին. և ով որ Եւսեբիոսի ըրած քաղուածք տեսած է, կրնայ այս բանիս վրայ անգորադառնալ: Դժբաղդաբար գիտեմք Սուրբասէն որ կեփաղիոն իմն երաժշտութիւնը Աղրիանոս կայսեր ատեն գրեց, ուստի ոչ երբեք կրնար βασιλεις (թագաւորք) յոգնակի իյնել: Ինչպէս կրնար կեփաղիոն 'ի պաշտօնէ գրել, երբ այն ատեն ինքն 'ի Սիկիլիա իբրեւ աքսորեալ կենար: Առ Եւսեբեայ կեփաղիոնի խիստ նման վկայութիւն մը գտնուի. Քրոնիկոն Ա. 93. « Բայց ինչ զինչ ուրախութիւն և խնդութիւն բերիցէ կոչել զանուանս բարբարոսիկ բարբառոց առանց արութեան ինչ և քաջութեան՝ զբռնաւորաց, վատասրբ.

տաց, թուլամորթաց, վայրենեաց »: զոր բնագիրն այսպէս ունի. « Այլ ինչ զինչ քաղցր և սիրելի իցէ կոչել յանուանէ առանց բարբարոսական գործոց՝ զբռնաւորս երկչոտս և թուլամորթս՝ հանգոյնս վայրենեաց »: սակայն չարագրեցաւ, որովհետեւ խօսքն 'նիւնուասոյ յաջորդաց համար է, որով կեփաղիոն ինքն իրմէ օրինակած կ'ըլլայ: Դեռ աւելի յայտնի կերպով Եւսեբիոսի վկայութիւնն դուրս ցատկած է, ուսկից խորենացի կեփաղիոնեան հատուածն առած է. և հայ թարգմանութիւնն ալ նոր զարմանալիք ծագի, թէ կեփաղիոն առաջ բոլոր թագաւորաց կատարեալ ցանկն շինելու միտք ունեցեր է, բայց յետոյ բարձրագոյն հրամանաւ մէկդի թողուցեր է: Յիրաւի կեփաղիոն 'նիւնուասոյ անարժան յաջորդաց անունները չի յիշեր, բայց անոնց համար առ կտեսիսա կը խաւրէ. բայց դեռ առաջ ըսած էր ըստ հայ թարգմանութեան. Ա. 92. « Յետ որոյ 'նիւնուաս առնոյր զիշխանութիւն. զորմէ ասէ կեփաղիոն՝ թէ ոչինչ արժանի յիշատակի գործ գործեաց: Եւ ապա թուէ մի ըստ միոյն »: Հայն սխալ հասկըցեր է զբնագիրն, յորում ասոր ամենեւին հակառակն է καὶ μεστῆται καὶ τῶν λοιπῶν « ի բաց թողու զայլսն »:

Իսկ խորենացւոյն ամենախոշոր վրեպակն յայնմ է, զոր ինքն աւելի հանդիսապէս դիմացնիս կը դնէ. Բ. Ժգ: Ինքը կը պնդէ, թէ ոչ իւրոս ձեռքակալեց զիրեսոս Լիւդացւոց թագաւոր, այլ Արտաշէս Ա. թագաւոր Հայոց 448-93 Ն. Բ. ասոր վկայ յոյն պատմագրաց չարակարգ մը կոչուի, որոց հատուկտիրքն բառ առ բառ մէջ բերուին: Որովհետեւ յոյն պատմագրաց ոչ ոք կրնար բնական կերպով այսպիսի ընդդէմ մտաց բան մը աւանդել. կարծի որ այս հատուածոց Արտաշէսն՝ Կիւրոսի ուրիշ անուն մ'ըլլայ և այս ըզՄովսէս 'ի վիճ վրեպանաց կը տանի: Բայց այս անուանակոչութիւնն գոնէ փլեգոնիոսի հատուածին մէջ չկայ, յորում առջի պարսիկ չորս թագաւորք ու

որոշ որոշ զանազանին, յԱրտաշէսէ : Հա-
տուածոց պատմական իմաստն Հերո-
դոտեայ Կրեստսի անկման պատմու-
թեան մէջ կայ, և նոյն է ամենեւին, ճո-
խացած միայն Գաբրիւսեայ Յունաց դէմ
ըրած արշաւանաց այլ և այլ գէպքե-
րով : Զորս զանազան պատմագիրք կան
չուին . այս ամէն հատուածոց կերպա-
րանքն հաւատարարպէս այլ և այլ հոե-
տորական օրինակներ են մի և նոյն նիւ-
թոյն վրայ . նախ Արտաշէսի մեծու-
թիւնը կը գովէ՝ առանձին հատուկտիր-
ներու իրարու հետ շաղկապեալ համա-
ռօտ հատուածոց շարք մը մէջ տեղ բե-
րելով, և 'ի վերջոյ բաղդին փոփոխու-
թեան կը պատշաճեցընէ . ապա կամ
Արտաշէսի անկումը կը պատմէ կամ
անոր բերանը բաղդին փոփոխութե-
նէն ստակացողի մը խօսք կը զնէ :
Այս հետտորական ձևն եթէ այն պատ-
մագրաց մէկուն քոյն կրնար ըլլալ, որ
մեզ ամենածանօթ է, շատ հաւանա-
բար առ Փլեդոնի, որ կրնար յիշել
միայն իր ողիմպիական թուականաւ
շարահորած չոր համառօտ պատմական
պատկերին մէջ Կրեստսի անկման գէպ-
քոյն, զոր գիտենք ձեռքբերնիս հասած
պատմագիրներէն ալ՝ թէ խիստ ցա-
մաք ոճով գրեց : Հակառակէն այս մի
և նոյն նիւթոյն վրայ, տարբեր ոճով,
այլ և այլ հեղինակներէ . չինուած չորս
հատուածքն, ինչպէս կան Սենեկայ հը-
ռետորին հակաճառութեան մէջ, այն-
պէս նման են իրարու ինչպէս հաւկիթ
ընդ հաւկրթի . ամբողջ գլուխն հոետո-
րութեան դպրոց կը հօտի, զոր խորե-
նացի յԱղեքսանդրիա ստացաւ . դի-
տենք թէ նա ամենանման համառօտ
օրինակօք իբրև ճարտասանական կըր-
թութեամբք ճոխացոյց իր Պիտոյից
գիրքը : Մինչդեռ մէկ կողմանէ իր վրի-
պակն դուրս կը ցատկէ, միւս կողմանէ
գլարմանալի է իր հնարից և զիւտից
պատմականութիւնն : Անունները զորս
կը յիշէ՝ նոյն մատենագրաց բուն ա-
նուններն են, որոնք ստիպուած են միշտ
իբեւնց գրուածոց մէջ Կրեստսի անկման
վրայ խօսիլ : Պոյիկրատէս հոետորն և

խոկրատայ հակառակորդն, կրնար յի-
շատակել իր մէկ հոետորական գրուած-
քին մէջ, նոյնպէս Եւագարոս լինտո-
սացի՝ թիմագենեայ աշակերտն, որուն
հոետորական հատուկտիրք կան դեռ .
Սկամանդրոս (որ մեզ Կամանդրոս հա-
սած է) նոյն է ամենեւին, որ փաղաք-
շական ձևով Σκαμάν Սկամոն իբրև հե-
ղինակ εὐρύματτα ճարտասանական գիւ-
տից (շատ մ'ալ հոետորական հատու-
կտիրներու), չափէն ալ աւելի յիշուի :
Փլեդոն անունն, զոր Ալիքիկանոս Կրեստ-
սի պատմութեան վկայ կոչէ, յայտնա-
պէս տարբերութեանց մէջ Փիզոնիոս,
Փլուտինիոս, Փլեդոնիոս Φλέγωνος աե-
ռականին սխալ ընթերցումը կը նշանա-
կեն, ինչպէս նաև ուղղակի գրաւոր աղ-
բիւր մը ակնարկին : Ուստի կարծեմ
որ Մովսէս այս հեղինակաց անունները
ըստ որում են' (որոնք Կրեստսի անկ-
ման պատճառաւ յիշատակուին) ճար-
տասանական օրինակաց ծաղկաբաղէ
մը կամ Ալիքիկանոսի քով գտնուած
հատուածներու վրայ ճարտարեր է : Ան-
շուշտ Մովսէս երևեցաւ ինչ որ էրն :

Իրաւունք կայ կասկածելու այն տեղ
ալ ուր որ հաւասար ապահովութեամբ
ապացոյց չկայ : Մովսէս Ա. գ. աւե-
գիր գրողցատրոշիւն կ'աւանդէ, զոր
Գորգի, Բանան և Դաւիթ (Հայ ծանու-
ցեալ արիստոտելեանն) յոյն փիլիսո-
փայից հետ ըրած էին և անոնց տեղե-
կութիւններն 'ի Հայրենիա հասուցած
էին : « Յորոց մի ոմն 'ի նոցանէ վար-
ժեալ փիլիսոփայութեամբ, (անշուշտ
Դաւիթն), ասէր այսպէս . թէ Ով ծերը,
յորժամ էի 'ի մէջ Յունաց զիմաստու-
թիւն վարժելով, գէպ եղև 'ի միում
աւուրց' զի վասն աշխարհագրութեանց
և բաժանմանց ազգաց 'ի մէջ արանց
իմաստնոց և հմտագունից բան ճա-
ռիւր . ոմանք այլաղգաբար և ոմանք աշ-
խարհաբար զորոցս մատենից տային » :
Ողիմպիոդորին խօսակցութեան այս
նախբաղանքն Պլատոնի Տիմէին տեղւոյ
մը նմանութիւն է, ուր կ'ըսէ . « Եւ կա-
մեցեալ երբեմն յառաջ վարել զնոսա՝
ձեռն արկանէ բանս ճառել յաղագս

նախնեաց, զժորոնեայ զառաջին աստ-
ցեղին և զնիորեայ, և զկնի չուրց հե-
ղեղի զԵկակախնեայ և զՊիւրրայ, թէ
որպէս եղեն՝ առասպելաբանեալ յ Տիմ.
3. էջ. 22. Որովհետեւ Ողիմպիոդոր
պղատոնական է, ուրեմն անժխտելի էր
այս նմանութիւնը. այս վկայութիւնը
ոչ միայն Եւսեբեայ Գրոնիկոսին¹ մէջ
կայ, այլ Ողիմպիոդորի վրայ հիմնեալ
աղբիւրն ալ կասկածելի կ'ընէ: Ողիմ-
պիոդոր ժամանակին գեղջկաց կենդա-
նի խօսակցութիւնը կը յիշեցնէ. դիտե-
լի է՝ Ոթննացին² հայ գեղջկաց խօսա-
կցութիւն. գեղացիք, ինչպէս կրնար
կարծուիլ, իրենց հարց պատմութիւնը
վկայ չեն կանչեր, այլ ֆսիսութեայ³
և իր որդւոց վրայ ճառող գիրքը, որ
հիմայ կորսուած է. ասկէ կ'աւանդեն
գեղացիք Մովսէս խորենացւոյն հայրե-
նեայ Տարոն գաւառին սկզբնական
պատմութիւնը: Ուս ամեն վկայութեանց
շարայարութիւնն, կորսուած գիրքն (որ
Արիւդենոսի ծննդակարգութեան գրոց
նման էր), գեղացւոց տուած լուրն, Ո-
ղիմպիոդորի խօսքն և Դաւթի աւան-
դութիւնը մէջ կը բերուին այն բանը
հաստատելու համար, որ ըստ Մովսէսի
յերգս հայ ժողովրդեան տեղն 'ի տեղ
կը բովանդակուէր³. Եթէ չընդունինք

թէ Դաւիթ զեռ կ'ապրէր այն ատեն,
ստիպուած ենք յԱթէնա ըրած այս յոռի
շրջանը միայն Մովսէսի վրայ թողուլ:
Թերևս Դաւիթ ծանուցեր էր խորենա-
ցւոյն թէ հայրենեացդ վէպն Ողիմպիո-
դորի ծանուցի, և նա Աթէնքի իմաստա-
սիրական թղթոց և զրուցատրութեանց
մէջ հետաքննութեամբ խօսեցաւ անոր
վրայ¹:

Այս վկայութիւնն հայկական հին
պատմութեան մի միայն զարտուղի դը-
րուագի մը յարմար է: Պատմութեան
զիշխար աղբիւրն Մար Աբաս Կատի-
նայ է, որոյ անունն 'ի ձեռագրին փո-
խուի Իբասայ հետ. Մար Աբաս Սելե-
կիոյ նեստորական կաթողիկոսի մը ա-
նուն է (337—554). Բագրատունեաց
արքունի ցեղին մէջ Աբաս անունը շատ
կայ վերջին ժամանակները. բայց Իբաս
ալ ատորի անուն է, զոր օրինակ Գաղ-
կեդոնի ժողովոյն միջոցն կրէր Եղեւսիոյ
եպիսկոպոսն: Ամբողջ անունը $\chi\alpha\rho\iota\varsigma$
Ἀβασὸς ὁ λεπτός, նշանակէ Տէր Աբաս հան-
ճարեղ, Մովսէս պատմէ թէ. « Մորա
(վաղարակայ) կարգեալ զիշխանու-
թիւնն իւր մեծապէս, և հաստատեալ
զթագաւորութիւն իւր, կամ եղև Գի-
տեղ սորա, թէ ոչք և որպիսի արք տի-
րեալ են 'ի վերայ աշխարհիս Հայոց
մինչև ցնա. զքաջաց արդեօք եթէ զվա-
սաց անցեալ ունիցի գտեղի, Եւ գտեալ
զոմն Ասորի, Մար Աբաս Կատինայ, այր

¹ Եւսեբ. Գրոնիկ. 211. « Չժամանակ զայ-
սոսիկ որպէս կարի հնազոյն յիշատակէ Պլա-
տոն 'ի Տիմէին օրինակ զայս. Մինչ գումարելն
կամեր զնոսս յառաջնոցն պատմութիւնս՝ զան-
ցից իւրաքանչիւր քաղաքի նախնեացն ասել,
սկիզբն առ զժորոնեայ և շինիւրայ, և զորոց
յետ ջրհեղեղին էին »:

² « Իսկ որ կատարելագոյն էր 'ի նոսա, Ո-
ղիմպիոդորոս անուն, այսպէս ասաց. Պատմելից
մեզ, տան, զորոցս անդիւր յաւանդութենէ 'ի
մեզ հասեալ, զոր և բաղումք 'ի գեղջկաց զրու-
ցեն մինչև ցայժմ: Մատեան լեալ զԴիսուս-
թրեայ և զորդուսն նորա, որ այժմ ոչ ուրեք է-
րե՛ի. յորում, ասեն, կարգ լեալ բանից այսպի-
սի »: (Խոր. Ա. 4):

³ Եթէ այդպէս էր, առ ինչ ինքն խորենացի
ալ ասոնց ծանրութիւնն չի տար յայտնապէս ը-
սելով. « Եւ այսորիկ զրոյցք տուտ և կամ թէ
արդարեւ լեալք, մեզ չէ փոյթ: Այլ վանն գի-
տելոյ քեզ գամեալսն, որ ինչ 'ի լըոյ և որ ինչ
'ի գրոց, անցանեմ ընդ բնան 'ի գիրս յայս, զի
իմացին զառ քեզ պարզամտութիւն իմի խոր-
հըրդոցս »: (Ա. 4):

¹ Շատ տարակուսական է այս կործին-
վան զի մեր ճատենագրաց ոմանք զԱնյաղժ ին-
չուսն աշակերտ համարին խորենացւոյն: Իսկ
Ողիմպիոդոր կրնայ այն եգիպտական Թեբացին
ըլլալ որ իբրև անուանի քերթող և պատմադէտ
հռչակուեցաւ: Արիւդենոսի և փոքուն Թեոփոսի
ժամանակ: Արդեօք Անյաղժին երկու այլ և այլ
տեղ յիշած Ողիմպիոդորն ալ նոյն չէ: Սահմ.
Իմաստ. Պր. 'Ի. Կըսէ. « Վասն զի ոչ փայլ
մարդ է կենդանի բանաւոր, այլ և հրեշտակք և
զեք. և որպէս ասեր Ողիմպիոդորոս փիլոսո-
փոս՝ եթէ Աքանդէլն իմն հնարս եգիտ բնու-
թիւնս. նուազութիւն հարստացեալ և հարցս
տուութիւն կեղծաւորեալ քնուազութեանցն »:
Եւ այլուր Ը. Պրակին մէջ. « Առ այսոսիկ ասաց
Ողիմպիոդորոս փիլոսոփոս, եթէ ոչ պղասանա-
կան գիրն զմեն նահանջէր զարդուեմն, այն
ինչ ահա տաժանարար լուծանէի զչգքնալթա-
խան՝ կապ կենցաղոյս »:

ուշիմ¹ և վարժ քաղղէացի և յոյն գրող,
զոր յլէ առ մեծ եղբայրն իւր Արշակ ար-
ժանի բնծայիւք, բանալ նմա զգիւսնն
արբունի. . . Մեծաւ լրլմոռութեամբ
հրամայէ (Արշակ) առաջի առնել նմա
զգիւսնն արբունի որ 'ի Նինուէ, միտն-
գումայն ուրախացեալ այսպիսի միտս
ունել եղբոր իւրոյ, որում զլէս թա-
գաւորութեան իւրոյ հաւատացեալ էր։
Եւ խուզեալ սորա զամենայն մա-
տեանն, գտանէ մատեան մի հելլէն
գրող, յորոյ վերայ էր, ասէ, վերնա-
գիրն այսպիսի. Այս մատեան հրամա-
նաւ Ալէքսանդրի 'ի Փաղղէացւոց բար-
բառոյ փոխեալ 'ի յոյն, որ ունի զբուն
հնոց և զնախնեաց բանս. . . . Յայսմ
մատենէ Մար Աբաս կատինայ զմերոյ
ազգիս միայն հանեալ զպատմութիւն
հաւաստի, բերէ առ արքայ վաղարշակ
'ի Մծբին յոյն և ասորի գրով. (Խոր-
Ա. Ը. Թ)։ Ըստ կարծեաց Խորենացւոյն
Մար Աբաս նախ պատմական հաւա-
քածոյ մը շինած է յոյն լեզուով, ապա
նոյն հիմամբ ասորի լեզուով պատմա-
գրութիւնն երկասիրեր է¹։ Խիստ յայտ-
նի է որ Մար Աբաս կատինայի հասու-
ցած բազմաթիւ յատուկ անուանք յոյ-
նի հետք անգամ չունին։ Ձ Զոր առեալ,
կ'ըսէ նորէն Խորենացի, անձնագեղոյն
և քաջաշնչոյն արին վաղարշակ, կու-
րովաբանոյն և հանճարեղի, առաջին
իւրոյ գանձուն համարելով՝ զնէր յար-
քունիսն 'ի պահեստի մեծով զգուշու-
թեամբ. և զմասն ինչ 'ի յարձանի հրա-
մայէ գրողմն. . . պարագայ մը որ եր-
բէք կարող չէ պատմութեան հեղինա-
կութիւն աւելցնել, մինչդեռ ինքն ան-
դադար անհարազատ գրոց կը գիմէ։
Մովսէս զՄար Աբաս իմաստուն ծեր
մը կը ստորագրէ և անոր մեծամեծ գո-
վեստներ կուտայ. աշր ոչիւմ և վարժ
քաղղէացի և յոյն գրով, քազմահմուտ

աւորի կոչելով, կը յիշէ զանիկայ և ի-
մաստունն, 'ի մէջ իմաստունցն իմաստ-
նագոյն։ Մար Աբասի գործն չորս՝ զիրը
էր ու վաղարշակայ և Արշակայ Ա. պատ-
մութիւնն ալ պարունակէր. 'ի հակա-
ռակէն տեղ մ'ալ չի յիշատակուի թէ
գործն վաղարշակայ բնծայեցաւ. թե-
րեւ կ'ուզէ հասկընել թէ անաջ երեք
գիրք նախնեաց պատմութիւնը հրա-
տարակեր էր, և ապա չորրորդ գրքով
ժամանակին պատմութիւնը աւելցու-
ցեր է։ Ուրեմն Մար Աբասայ Խորենա-
ցւոյն հետ ունեցած նմանութիւնը կա-
տարեալ է, որ իր արդի ունեցած երեք
գրոց վրայ, որ հայ թագաւորութեան
սկզբէն ինչուան անկումն կը պատմեն,
չորրորդ մ'ալ աւելցուց կամ գեռ կը
մտածէր աւելցնել՝ որ ժամանակին
պատմութիւնը պիտի աւանդէր։ Ար-
շակ մասաւր թագաւորացալ է թէ վա-
ղարշակայ բնտրած մատենագրին իրեն
տուած գովեստները նման են անոնց՝
զոր Խորենացի Սահակայ Բագրատու-
նոյն կու տայ, որ նմանապէս զՄովսէս
ընտրեց մատենագիր, ինչպէս վաղար-
շակ զՄար Աբաս. և Մար Աբասայ դու-
ծոյն արտաքինայարդար վաւերականու-
թիւնն Մովսէսէն աւանդած վաղար-
շակայ նամական հանդերձ՝ հիմնա-
կան պատճառներով տարակուսելիք
են։ Յայտնի է թէ Մար Աբասայ գործն
լեթէ հարազատ է, քաղղէակնն աղ-
բիւրէն թարգմանածին նմանը դեռ
կար։ Այս աղբիւրն կը պարունակէր
ոչ միայն Հայոց նախնի պատմութիւն,
այլ և բնդհանուր փամայ և Սեմի նա-
հապետաց պատմութիւն, և ինչպէս որ
Մովսէս Մար Աբասայ բերանը կը դնէ,
նոյն աղբիւրը Զրուան, Տիտան և Յա-
պետոսթէ երեք եղբայրներէն կը սկսի։
Զրուան Κρόνος կամ Χρόνος բառին հայ-
կական թարգմանութիւնն է, և ամբող-
ջութիւնն յունարէնի անհմտի մը Սի-
բիլեան տաղից աշխարհը ընդորինա-
կութիւնն է. Καὶ ἐβασίλευσε Κρόνος, καὶ

¹ Խորենացւոյն խօսքն «ասորի գրով» ինձ
կ'երևնայ թէ պարզ ասորի տառ հասկնալու է.
որովհետեւ Հայոց պատմութիւնը Հայք պիտի
հասկընային, և լեզու ունենալով ասորի գրով
վարենի, ինչպէս գիտենք 'ի պատմութենէ. իսկ
յոյնն ալ ազգէն բարձրագոյն գասուն համար երբ

1 Quatremère, Journ. des Savants. 1850.
p. 364.

Τίταν Ιάπετος τε, և քազաւորեաց կռնոս
և Տիտան և Յապետոս: Սիրելեան մա-
տեանն զոր կ'ականարկէ՝ Գրիստոսէ 124
տարի առաջ է, ուրեմն մեծին Սղէ-
քսանդրի ատեն գրուած գիրք մը չէ՝
ընդունելն իսկ թէ Մար Աբաս իր գիրքը
ուղղակի կամ անուղղակի ՚ի Սիրելեան
մատենից քաղեր է՝ մեծամեծ դժուա-
րութիւններ ունի. որովհետեւ վաղար-
շակ որուն համար գիրքն պիտի շինուէր՝
ըստ ժամանակագրութեան խորեմա-
ցոյն՝ 131 տարի Ն. Գ. մեռաւ: Եւ
հարկ է դեռ խիստ յետ ձգել, որովհետեւ
աղէքսանդրացի հրէի մը չինամ բա-
նաստեղծութիւնն շատ ժամանակի պի-
տի կարօտէր հեթանոս գիտնական աշ-
խարհին մէջ և ինչուան ՚ի Մծբին միջ-
նայու համար: Ենթադրելով թէ իրա-
կանն այս ըլլար՝ սակայն դեռ նորանոր
դժուարութիւնք դուրս կ'ելլան՝ զբքին
արտաքին ձևոյն և անոր պարունակե-
լոյն նկատմամբ: Մովսէս գործոյն յա-
ռաջաւոր կ'աւանդէ. այս յառաջա-
րանք բոլորովին ճարտասանութիւն է,
ինչպէս է ինքնին Մովսէսի գործն, և
զշայկ կը ներկայացնէ « Յապետոս-
թեանն Հայկ » ըսելով իբրև թէ աշ-
խարհածանօթ ըլլար. և սակայն հայ
երգերը լսողաց ծանօթ էր և ոչ թէ
Մար Աբասայ գիրքը ընթերցողաց,
իսկ պարունակեալն՝ գործոյն ուղղակի
այն ամենակասկածելի մասն է, զոր
Մովսէս իբրև ժամանակակցի՝ Մար Ա-
բասայ բերանը կը դնէ: Որովհետեւ ին-
չուան ՚ի չնչինսն կ'իջնայ, կը ստորա-
գրէ նախարարաց պաշտամանց կարգը,
յորում՝ ամեն ազնուական տուն սահ-
մանեալ իշխանութիւն մը ունի. յիրա-
ւի շատ հաւանական է թէ պաշտօնէից
այս կարգաւորութիւնն՝ Հայոց վերջին
թագաւորաց ատեն ալ կար, բայց թէ
թագաւորութիւնն սկսելուն ատեն ե-
ղաւ և հաստատուեցաւ այս կարգա-
գրութիւնը, և թէ ժամանակակից պատ-
մագիր մը յանձն առաւ մեզի աւան-
դել. ով որ կ'ուզէ թող հաւատայ: Մոր-
փիւղիկէս մակեդոնացի զօրավարն, ո-
րուն անուան վրայ գլուխ ճաթեցնելն

ընդունայն է, այն գործարանէն ունի
իր ծագումն, որ Ιάπετοςէ Յապետոսէ
թարգմանեց. Μορφίλινκος (գայլակերպ)
այնպիսի յունագէտի մը միայն հաւա-
տայի է: Եւ ահա յանկանկաւ Մովսէ-
սէն անկախ աղբիւր մը յիշեան կու գայ
Մար Աբասայ, և անոր գործոյն գոյութիւ-
նը հաստատող՝ Սերէոսի նոր գտնուած
յառաջաւորն է այս (660. թուին), ո-
րուն գաղղիական թարգմանութիւնը
հրատարակեր է Լանկլուայ Հայոց պատ-
մութեան հաւաքածոյին մէջ (Պ. 195-
200) Սուր Ագաքանգեղոս հետաքրք-
քրական վերնագրով. այս հատուածոյն
հեղինակն ոչինչ անմասն ՚ի մթու-
թեանց և յիրական կամ յառեղեղթ
հակասութեանց, կ'ըսէ. « Հայելով ՚ի
մատեանն Մարաբբայ Մծուրնացոյ »
(Մնծուր ՚ի բարձր Հայս), զոր եգիպ-
տոյմեալ ՚ի վերայ արձանի ՚ի Մծբին
քաղաքի՝ յապարանսն Սանատրուկ ար-
քայի հանդէպ դրան արքունական տա-
ճարին, ծածկեալ յաւերածի արքու-
նական կայննիցն, փանդի զսինս տա-
ճարին այնորիկ խնդրեալ ՚ի զուռն ար-
քային Պարսից, և բացեալ զաւերածն
վասն սեանցն՝ ըսողիպան արձանա-
գրին դրոյմեալ ՚ի վերայ վիմի դամս և
զաւուրս հինգ թագաւորացն Հայոց և
Պարթեալ յունարէն զպրութեամբ.

1 Պաթմաթիւն Սեֆէտի եղիպոսի ՚ի Հերակլէս. ՚ի
Պոստաղեղուպոլիս տպագրեալ ՚ի թագեղոսէ
Միհրդատ Տ. Աստուածատուրեան Միհրդա-
տեանց. 1831. էջ. 1—14.

2 Մծբին անուած աղաւաղութիւն կրնայինք
համարել եթէ ետեւն անմիջապէս Մծբին չլի-
ջուէր: Այս յէջ 12. Մծբնայալ որեւոյն Մնծուր
է քիչ մը տարբեր, բայց ըստ տեղոյ՝ պատմու-
թեան անյարմար է և աւելի Նինուէ կամ արդի
Մուսուլ կրնայ հասկըցուիլ. վասն զի կ'ըսէ. « Եւ
յուզարկէ զնա ՚ի Մծանայ ընդ արևմտսս դո-
րու մեծաւ » . յուզարկոյն Արշակ պարթեւն է,
յուզարկեալն Արշակ փոքր ըստ Սերէոսեան
հատուածոյն, և ՚ի Մծանայ բացառական հոլով:
Իսկ ՚ի հակառակէն ՚ի վերջն էլ հաստածոյն
Մծբին Միծանի գրուած կայ, որով կրնայ ՚ի
Միծանայ բառն հոլով սխալ ըլլալ և ոչինչ ա-
ւելի:

3 Այսինքն է ընդհանուր Սեֆէկեանց և Ար-
շակունէաց չորրորդապետ թագաւորաց կարգն:
Տես և ՚ի պատմութեան վարդապետ վարդապե-
տի ԳԼ ԺԵ: (Մատթ. Հելլիսթին):

զոր իմ գտեալ 'ի Միջազեռս 'ի նորին աշակերտացն, կամեցայ ձեզ զրուցակարգել, քանզի ունէր վերնագիր այսպէս: «Ես Աղաքանգեղոս գրիչ գրեցի 'ի վերայ արձանիս այսորիկ խնով ձեռքաւքս զամս առաջին քաղաքացն Հայոց, հրամանաւ քաջին Տրդատայ առեալ 'ի դիւանէ աշքոռնի, զոր փոքր մի և ապա յիշրոմ տեղոջ տեսցես զպատձենն »: Հեղինակն խոստանայ թէ « փոքր մի և ապա յիշրոմ տեղոյ տեսցես զպատձենն » թաւաւորաց ցանկին, և իրօք հատուածին ետէն Հայոց և Պարթևաց թագաւորաց կրկին ցանկերն կան: Միայն Հայոց թագաւորաց կարգն Տրդատ թագաւորին ժամանակէն ալ անդին կ'անցնի և Պարսից Շապուհ երկրորդն ալ յիշէ իբրև տէր Հայաստանի, անոր 74 տարի կու տայ, որով իր եղբօր Արտաշիր երկրորդի թագաւորութեան չորս տարին ալ անոր կը տրուի, որ 383ին մեռաւ: Յայտնի հակասութեան մէջ կ'իյնայ ընդունելով թէ արձանագրին ցանկն Մարաբբաս ինչուան իր ժամանակն չարունակեց. Պապայ և Շապուհ երկրորդի (որոց տարեթիւն կատարեալ աւանդուին) որդւոց ատեն, Հայոց Արշակ երկրորդի և Վաղարշակ երրորդի և Պարսից Շապուհ երրորդի ատեն գրուած կրնայ ըլլալ արձանագրութիւն (383-388): Անտարակուսելի բան է հետևաբար, թէ Աղաթմանգեղոս ցանկերուն հնագոյն մասին յայտնի իբրև վկայ կրնայ համարուիլ, և մնացորդ մասին մէջ մասն չունի: Առաւել ևս տարեգիրն միայն Մարաբբայ Մծուրնացին կրնայ ըլլալ՝ յոր արձանագրոյն դիմէ, ըստ որում Հայոց հին պատմութիւնն ինչուան մեծն Աղէքսանդր հասցնողն ինքն է. և ամենայն ինչ վկայէ թէ ամբողջութիւնն անոր գրքին քաղուածոյք մ'է: Առջի դէպքով խօսող հեղինակն որ զարձանագիրն Մարաբբասայ աշակերտաց քովը գտաւ, Սերէոս չի կրնար ըլլալ, այլ անանուն մը հինգերորդ դարու երրորդ մասին մէջ, որուն երկաթրութիւնը Սերէոս քաղեց կամ

ըստ դիպաց Սերէոսի գործոյն հետ միացեր է: Հայոց նախնի պատմութեան ստուերագիրն զոր անանունն կ'աւանդէ՝ ամենեւին նման խորհնացոյն Մար Աբասէն քաղած պատմութեան՝ կը հասնի մինչև Հայաստանի առջի արշակունի թագաւորներն, երբեմն խիստ մօտենալով, երբեմն համառօտաբար, երբեմն ալ ընդարձակօրէն, այնպէս որ երկուքին բոլորական համաձայնութիւնը տարակոյս չի վերցնել: Բայց ընդհանուր և խիստ մեծ համաձայնութեան մը մէջ յառանձին դէպս երկուքն ալ այնչափ կը տարաձայնին իրարմէ, որ դժուար է որոշել թէ արդեօք անխնամ համառօտելուն հետեւնք է թէ միջ կամ միւս կողմանէ խորհրդով եղած փոփոխութիւնք են: Ո՛ր կողմն աւելի բնագիր ըլլալու իրաւունք ունի, տարակուսելու հարկ չկայ: Սերէոսի հատուածն Մարաբբասէն առնուած յոյն արձանագրութիւն մ'է, Մովսէս Մար Աբասայ գործոյն յոյն և ասորի շարագրածը կը ստեղծէ: Սերէոս կ'ըսէ պարզ թէ թագաւորաց յոյն ագաթմանգեղոսեան ցանկն 'ի Մծրին սեան մը վրայ գտնուած է: Մովսէս 'ի պատիւ երեսաց Մար Աբասայ՝ հրամանաւ Վաղարշակայ՝ գործոյն մէկ մասն սեան մը վրայ փորագրել կու տայ: Մար Աբասայ գործոյն սկզբնաւորելոյն արտաքին երևոյթն (զոր Մովսէս կ'աւանդէ), քաղդէական գիրքն և անոր վերաբերեալ ամենայն մանրամասնութիւնք չկան 'ի Սերէոս: Ի վերջէ և որ մեծն է, Սերէոսի Մարաբբասն ինքնակաց Հայաստանի վերջին երկու թագաւորաց Արշակ երկրորդի և Վաղարշակ երրորդի ժամանակակից է, իսկ Մովսէսի Մար Աբասն հինգհարիւր տարիէն աւելի առաջ Պարթևաց Արշակ երկրորդ թագաւորին և անոր եղբօր Հայաստանի առջի արշակունի թագաւորին Վաղարշակայ ժամանակակից է: Մովսէսի խո-

1 Վերջինը Հիւսիսային Գիսնականին կարծիքն է, 'ի Պարթևութեան Հայաստանի և Նախին դարձեալ Սերէոսի տես 4: (Մանթ. Հիւսիսային):

տորմանց յայտնի նպատակն է հին և զօրաւոր ցուցընել աղբիւրը և անկէ հանած պատմական գիպաց ալ յարդը աւելցնել։ Մար Աբասայ ասորի և յոյն գրեւոն կարծիքն ալ Մովսէսի իւրեն ամբողջ գործոյն մէջ ցուցըցած մասնաւոր հակամիտութեան յարմար է։ Այսպէս մասամբ միայն կը թեւեռանայ Մովսէսի բռն Սեբեոսի հատուածովն։ Ինքն այլայլեր է զՄար Աբաս, և ուղղակի կարծեաց մէկն, որուն համար կը դիմէ առ Մար Աբաս, է քրիստոնէութեան ատեն հնարուած Բագրատունեաց ծագումը Նաբուգոդոնոսորէն գերեալ Երայեցիէ մը ենթադրել, որ նոր աղբիւրով սուտ կ'ելլայ, յորում Բագրատմ փառաւաղեան Արամանեկայ Հայկայ որդւոյն յաջորդն կը յիշուի¹։ Բայց և անանունին

1 Խորենացի Բագրատունեաց ցեղին ծագման պատմութիւնը հետագայ կերպով կը պատմէ և կը հաստատէ։ Ա. իբ. : «Առ սովաւ (Հաւաքէ)» սանն կեցեալ զՆաբուգոդոնոսոր արքայ Բաբելոնացոց, որ գերեաց շէրէայս։ Եւ սորա ասն զմի 'ի գլխաւորաց երայեցեոցն գերելոց խնդրեալ 'ի Նաբուգոդոնոսորայ՝ Նամբաթ անուն, ածեալ բնակեցոյց մեծաւ պատուով և 'ի սմանէ ասէ պատամարդին լինել զարգէն Բագրատունի, և հաւատի է »։ Բայց զընէրէոյն ստիպմամբ 'ի հասկածանս կը ձգէ երբ քիչ մը յետոյ կ'աւելցընէ թէ, «Քանզի աւելն ոմանց անհաւատս մարդոց, ըստ յօժաւումսն և ոչ ըստ ճշմարտութեան, 'ի Հայկայ զԹագադիր ազգդ լինել Բագրատունեաց։ Վասն որոյ ասեմ մի այսպիսեաց յիմար բանից հաւառնիր։ Ղի և ոչ մի շաւիղ կամ ցուցումն գոյ նմանութեան յասացեալոց՝ որ պարզաբութիւնակն արկէ։ Ղի 'ի բայ բանից և անո՞՞ իմն յազագս Հայկայ և նմանեացն կակաղ»։ Ո՛վ է արդեօք այս անո՞՞ իմն կակաղ։ ազգային առ մեզ հասեալ պատմագրաց ոչ ոք։ Այս անո՞՞ պատմագիրն կրնայ Մարաբաս մծուրնեցին ըլլալ ինչպէս Փերսիանացին ալ 'ի նոյն միտս է. վասն զի Սեբեոսեան տպագիր արձանագրութեան յէջ 8 հետեւալ ցեղաբանութիւնը կայ. «Եւ արիւն 'ի վերայ Չարէն որդի որդւոց Արամանեկայ, այր զօրաւոր և կորովի ազգաբն. ապա Արմոզ. ապա Սարհանգ. ապա Շաւաշ. ապա Փառնաւազ։ «Սա մեաւ զիգագմ և զիգագարամ և Բագրատմ մեաւ զիգարամ մեաւ զիգարամ և Բիւրամ մեաւ զԱսպատ. և որդիքն Բագրատմայ ժառանգեցին ըզժառանգութիւնս իւրեանց 'ի կողմանց արևմտից. այսինքն է Աճգեղ ասուն. զոր 'ի ժամանակն յայնմիկ ազգ. արքարորտացն աստուած կուշեցին։ Այս Փառնաւազ հնագանգեալ Նաբու-

հատուածն ալ ազատ չէ յամեն վրիպանաց, Թագաւորաց ցանկերն յոյնին հետոց նշմար անգամ շունին անուանց մէջ, և հայերէնն գրեթէ տեսակ տեսակ հատուածոց անկարգ ծաղկաբաղմէ, մի և նոյն հակապատմական կնիքը կը կրէ՝ նման Խորենացոյ գործոյն, ուսկից քիչ մը միայն կը շեղի, այնպէս որ արձանագրութիւնն պէտք է սուտ ըլլայ և Ագաթանգեղոսի հեղինակութիւնը կեղծիք։ Բայց եթէ պարզապէս Մարաբասնէն հրատարակեալ գործ ալ համարինք զայն, դժուարութիւնը կը բազմապատկին։ Պարթև Արշակունեաց տարեգումարն 573 տարի կ'ելլայ (ըստ այլ գումարի 576), ճիշդ դարմաւելի. և եթէ այս չափազանց տարեթուին մէջ գրչի սխալ չկայ վկայէ հայ թագաւորաց գաւաղանագիրն, յորում անհատից տարեթիւն սկսելով 1293էն, մեծն Արշակէն, այսինքն հարստութեան սկիզբէն ինչուան 'ի մահն Խոսրովու, որ ըստ Ագաթանգեղոսի Արտաւանայ վերջին արշակունւոյն մահուանէն 10 տարի ետքը կ'ելլայ, գումարի 455 տարի, դարձեալ դարմաւելի։ Մովսէս սխալն ուղղեր է Սեբեոսեան անդին եղած միջոցը լրացնելով, որուն թուականն՝ երկու աղբւրացն ալ ժամանակագրութեան

գողոնոսորայ արքայի 'ի Բաբելոն »։ Եւ որ մեծն է նոյն հեղինակն յէջ 12 աւելի որոշ Խորենացոյն ընդդէմ պատմաբանէ. «Եւ յուրազէն զնա (զԱրշակ Փոքր ըստ Սեբեոսի և զՎաղարշակ ըստ Սիրոյն ծերոյն) 'ի Մծանայ ընդատրմուտս զօրու մեծաւ եօթանասուն հազարաց սպառազինեալ և մեծամեծ իխնեօք նախարարաց հազարաց բերաւորաց, որում ոչ զք կարէր զդէմ ունել պատերազմաւ։ Սմա ընդ առաջ ելաներ Բագարատն Փառազեան յորդուցն Արամանեկայ նախարար մեծ հանգերմ զօրու։ Սատուցանէ նմա պատարագ ոսկի և արծաթ. և զարգարէն զնա 'ի սանդր և 'ի վահագս. պսակէն զնա 'ի թագ հայերնի. և նստուցանէ զնա 'ի վերայ ոսկիապատ ակնակալու. զահայեցն և ասոյ նմա զգուսար իւր 'ի կնուութիւն։

«Չաս արար Արշակ այցայ սասպես Հայաստան երկրին, որ էր իշխան և հրամանատար աւանայն Թագաւորութեանն, հրամանաց զգուս, և հայր արքայի և եղբայր, որում ետ իշխանութիւն տերութեանն այնորիկ։ Նա կոտորեաց զՏակայան, որ զօրաժողով եղէն 'ի վերայ նորա 'ի Միջագետս Ասորոց »։

ակերնակէտ¹ է. Սերկեան թուականն Ասորոց ազգային ժամանակագրական կանոն դարձեր էր, և ասորի մասենապրութեան ընդհանուր գործածականն էր. իրաւամբ կը հարցուի թէ ինչպէս կարելի է որ բազմահմուտ ասորի մը կամ միայն ասորի հայ մատենագրող

1 Պարզ հասկընալու համար հարկաւոր համարիմ Սերկոսէն հասած Պարթեաց և Հայոց արշակունի թագաւորաց ցանկը դնել իրենց թագաւորութեան տարեթուոնք: Կը յաւելում Լանկուայի տարեթուութիւնը, ուսկից առած է Գերմանացին Հայոց թագաւորաց ցանկը:

Պարթեաց թագաւորք

Արշակ	56
Արշակ	70
Աշնաշ	32
Արշէն	22
Արշաւիր	45
Արտաշէս	34
Դարեհ	30
Արշակ	17
Արտաշիր	46
Պերոզ	64
Վազարշակ	50
Արտաւան	36

502

ըստ տպագրին ՇՀԳ = 573:

Հայոց թագաւորք

Ի Լանկուս

Վաղարշակ	42	
Արշակ	13	
Արտաշէս	25	
Արտաւան և Արշաւիր	12	37
Արշակ	37	դաւաթ
Սրուանդ	21	
Արտաշէս	52	
Տիրան	22	
Տիգրան	42	
Արշամ	20	
Արգար	38	դաւաթ
Սանատրուկ	30	
Արտաշէս	41	
Արտաւազդ և Տիգրան	24	
Վաղարշ	20	
Խոսրով	48	

487

տպագրին չունի գումար:

Պարթե թագաւորաց տարեթիւն 458 կ'ըլլայ և Հայոց 487 և ոչ թէ 576 Պարթեաց և 455 Հայոց. իսկ տպագրին 573 թիւն յայտնի գրչի սխալ պիտի ըլլայ, և այսպիսի վերապններ չատ կան ի ձեռագրերս:

մը՝ այս թուականին մեջ դար մը կարենայ սխալիլ:

Գարձեալ Ագաթանգեղոս Տրդատայ ասենադպիրն՝ իբր Մարաբրասայ հեղինակութիւն տուող մը հնարուած է, որ աւելի դժուարահաւատալի է քան զբուն հեղինակն արձանագրութեան, իրեն անունն հռչակեալ է և յարգի Տրդատ թագաւորին և Լուսաւորչին պատմութեան հեղինակութեամբ, յորում իբրեւ « Բարեգուշակ անուն » (Ագաթանգեղոս)¹ բարի ալ նշանակութիւն ունի, որով մէկէն կը պղտորի մարդու միտք, թէ նա այս պատմութեամբ և ասոր համար միայն ունի իր գոյութիւնը: Բայց այս անհարազատ գրուածքն ինչպէս որ հիմայ կ'երևնայ՝ նախ 453ին գուրս ելաւ. ուրեմն ինչպէս կրնար Ագաթանգեղոս ճանչնալ զՄարաբրաս և իբրեւ վկայ ուրիշ անհարազատ գրութեան մը հրատարակել, երբ ինքն 385ին մատենագիր է: Եւ որ մեծն է, Տրդատէն անդին Հայոց թագաւորաց կարգին վերջին մասն զոր իբրեւ Մարաբրասայ շարունակութիւն համարելու է, 138 տարուոյ գումար է, և իրաւ ինչուան Պապ վերջին թագաւորին ժամանակն կը հասնի. բայց այս մասին թագաւորաց ցանկն ալ նոյն պատմական արժէքն ունի ինչ որ առաջին մասն, որուն հեղինակն Ագաթանգեղոս է. այս գումարն կ'ըլլէ, վասն զի Շապուհ երկայնակեաց կ'աւելցընէ Պապէն առաջ, (որուն հետ կուռեցաւ), հայ թագաւորաց ցանկին մէջ՝ անթիւ պարագայ միջոցները լեցնելով: Անկարելի է որ երկու թագաւորաց ժամանակակից մը այսպիսի տեղեկութիւն կարենար հաղորդել: Թագաւորաց ցանկին մէջ վերջին մը ժամանակաւ կ'երևնայ որ չորրորդ դարու յիշատակարանները ժամանակագրական կարգի մը վերածելու նախափորձը կ'ընէ. յայսմ Մովսէս ամենահմուտ կ'երևնայ: Կրնանք հիմայ հաստատել որ Մովսէս խորենացի և

1 Աբանելի և կորովամիտ Ագաթանգեղոս, որ Թարգմանի Բարի-Հրեշտակ (Կիրակ. էջ 2):

Մարաբբաս Մծուրնեցի՝ երբ հաւաքել ուզեցին հայ ազգին վիպասանութիւններն և զանոնք իբրև պատմութիւն հրատարակել՝ միայնո՛ք եղան խարդախելու միանգամայն և յարգը մեծցնելու մէջ։ Մար Աբասայ պատմական տարրն ըստ որում Մովսէս կ'աւանդէ՝ երկու նպատակ ունի. նախ հայ աւանական երգոց և վիպասանութեանց պատմականութիւնը ապացուցանել. երկրորդ անուանի նախարարաց ցեղերու՝ մասամբ այլաբանական և մասամբ անհարապ ծագումն տալ, որոց ազգաբանութիւն ըստ Մովսէսի ինչուան՝ ի Սարգանաբաղ քաղղէական թագաւորն վեր կ'ելլէր և դեռ անդին ալ կ'անցնէր։ Եթէ այս երկու կէտն վերցնենք՝ թէ իր Մար Աբաս եպիսկոպոսն և թէ անոր համառօտող զուգորդ Մարաբբաս Մծուրնեցւոյն պատմութենէն, բան չի մնար։ Դեռ զօրագոյն հարցմունք մը ընենք, զոր ամենայն դէ հարկեալ է հարցընելու. ինչպէս համարձակեցաւ Մովսէս հնազոյն ժամանակակցի մը երկասիրութիւնը հինգ հարիւր տարիէն աւելի առաջ ձգել, զՄարաբբաս Մծուրնեցի՝ որ էր 385 տարի յետ Գրիստոսի, փոխելով Մար Աբաս եպիսկոպոսի հետ՝ որ 131 տարի առաջ էր քան զԳրիստոս. եթէ իրօք երկասիրութիւն մը կար՝ խարդախութիւնը մէկէն չէր մատնուեր։ Մարաբբասէն բոլորեալ հատուածին անծանօթ հեղինակն՝ ըստ բովանդակութեան միայն չէ համաձայն ընդ Մովսէսի։ Հատուածին հեղինակն կը սկսի. «Եւ եղև ոչ ՚ի կամայական պիտոյից վարժ խուզակի ստորագրել զժամանակ և զնախնի քաջացն ձեռնարկել»։ Երրորդ վիպասանութիւն «. ճիշդ այնպէս ինչպէս որ խորենացի կրկնէ և երեքնէ թէ պարզաբար Սահակայ Բագրատունւոյն հրամանաւ յանձն կ'առնում պատմագրել։ Դարձեալ Մարաբբասայ գիրքն ՚ի Միջագետս անոր աշակերտաց քովէն կը գտնայ ճիշդ այն ժամանակ, յորում Մովսէս ալ, ինչպէս ինքը կ'ըսէ. «Հասանէր յեղեատացոցն քաղաք և թեթևակի ընդ խորս գիւա-

նին նաւեալ անցանէր...» (Գ. կր.) և այս 431ին էր։ Համառօտ ըսելով Սեբէոսեան անծանօթին հատուածին մէջ եւ խորենացւոյ գործոյն ստուերագիրը նշմարեմ, զոր ապա Մովսէս կատարելագործեց և ըստ մտաց իւրօց ուղղեց, մասամբ առջի սխալներն ուղղագրելով, մասամբ ալ այն ինչ երկիւղածութեամբ և զատ զատ եղած առասպելներն՝ իր պատմութեան նիւթոյն աւանդութեանց յարմար գեղեցիկ յօդուածոյ վիպասանութեամբ մ'ընդարձակեց։ Եթէ Մարաբբաս Մծուրնեցի, և առաւել ևս՝ իր գործն եղած է, որ ամենկին տարակուսական է, անոր պաշտօն եղած է իբրեւ յսաւոր օժանդակել քաղուածոյ առասպելայօգ պատմութեանց, և Մովսէսի համար այն է՝ ինչ որ է լատին գիրքն մեր շատ միջնադարեան բանաստեղծից համար, ուսկից թարգմանեցին քաջաց արկածները։

Եթէ այս իմ կասկածս մերժելի ալ երևնայ, սակայն Մովսէսի վրայ եղած ընդհանուր դատաստանէն էական բան մը չի փոխուիր։ Ինչ կը նշանակէ Մովսէսի ստեղծ ստեղծ յայտնապէս աղաչելն զընթերցողը չզարմանալ պատմածին վրայ, վասն զի արդէն այս ինչ կամ այն մատենագրէն ապացուցեալ է. և նոյնպէս շատ անգամ կրկնել, թէ իր պատմութեան մէջ սուտ չկայ, այլ մանաւանդ ամենայն ինչ ՚ի ճշմարտութեւն արեւրաց քաղուած են։ Որ խնդրէ անբասիր առնել զանձն՝ դատախազ անձին յառնէ։ Qui s'excuse, s'accuse.

Ըստ այսմ ամենայնի քիչ շատ ստուգութեամբ կ'երևնայ նպատակն, յոր դիմէ Մովսէս իրեն պատմագրութեւն՝ Գրիստոնէութեան հետ Հայոց ազգին մէջ ներքին երկպառակութիւն մը ծագեր էր. եկեղեցին՝ յունական եկեղեցւոյն հակամէտ էր, ազգային յիշատակարանք և շահն միտէր ՚ի Պարսիկս։ Վերջիններն այնչափ զօրաւոր էին որ երբ քաղաքական ինքնավարութիւնն աղետալի յեղափոխութեանց մէջ անցաւ նախարարաց ձեռքը, մեծ վախ կար որ ՚ի վերջէ քրիստոնէութիւնն

պարսիկ հայրենաւանդ կրօնից, և ուղղափառան փոքրասիական եկեղեցին ալ՝ պիտի ստիպուի նետտորականութեան տեղի տալ։ Այս վտանգին դիմացն առնելու համար, և հոգեւորականաց ձեռք գոնէ Պարսից ձեռքէն ազգին ինքնագլխութիւնն ազատելու համար՝ բացարձակ հարկաւոր էր որ քրիստոնէութիւնն ճակատ առ ճակատ կամ խիստ ատելութեամբ չլրտուի ազգային աւանդուէց հետ, մանաւանդ թէ զուգի և նոյնանայ հայրենասէր ամէն հակամիտութեանց հետ։ Յայսմ եկեղեցին դիտեց ազգին սիրելի աւանդութեանց՝ Պարսից կրօնից հետ առնեցած կապը խզել ըստ կարելոյն, անոր տեղ ուրիշ մի փոխանակելով, որ քրիստոնէութեան համաձայն յոյն կրթութեան և դպրութեան յարմարի, բայց յայսմ ալ Հայ ազգին ինքնագլխութիւնը պահելով և աճեցնելով, քահանայական և իշխանաց կարգէն հայրենասէրքն խիստ որոշ հասկըցան զայս։ Այս ուղղութե մէջ ևրթալու նախկին մեծաքայլ յառաջադիմութիւնն եղաւ հայ դպրութեան գիւտն, յորում անմահ յիշատակի արժանի հանդիսացան մեծն Սահակ և Մեսրոպ։

Բայց զեւ կը պակսէր նոյն տեսութեամբ շինուած պատմագրութիւն մը, որ ժողովրդեան բերանն ըլլայ։ և ահա ասոր համար Սահակ Բագրատունի հայրենասէր նախարարն (որ յետոյ Պարսից զէմ պաշտամբ Հայոց գլուխ կեցաւ, և զրեթէ եկեղեցականաց ձեռք ալն այն ինչ ստացած ազգային միութիւնը և զօրութիւնը կեդրոնացուցած՝ վերջին քաղաքական վերածնութեան մը համար ամեն ջանք թափեց) խնդրեց ալեւերեալ եկեղեցականէ մը, որ յիշելով երկու մեծ մարդկան դպրոցին աշակերտ էր, այնպիսի պակասութեան մը թերին լեցնելը յանձն առնու։ Փափագելի պատմագրութիւնն պիտի համապատասխանէր իր նպատակին, որուն պաշտօնը պիտի ըլլար ազգին հետ ծնեալ և սնեալ աւանդութիւնները լիովին ըստ կարելոյն՝ բայց զերծ և ան-

մասն 'ի պարսիկ առասպելաց' գրել և յետնոց աւանդել, նատարեցաւ պարզաբար ակնկալեալ ազգին վիպասանական պատմագրութիւնն, սակայն մեծաւ մասամբ այն ժամանակին ըմբռնմամբ։ Հայ ազգին յատուկ պիտի ըլլար պատմագրութիւնն։ Բայց որովհետեւ ազգն իր վրոյ խրոխտացող աշխուհականօքն էր ինչ որ էր, հարկ էր երկրին անուանի և հզօր ազնուականաց ժագումն, ազգաբանութիւնն և քաջագործութիւնները իր մէջը բովանդակել։ Այնպիսի պարագայից մէջ յորս գրուեցաւ խորենացոյ գործն՝ ինքնին յայտնի էր թէ Մովսէս պիտի գիտէր 'ի մասնաւորի Բագրատունոյն փառքն և պարծանքն։ Ասոնք մատենագրին վրայ դրուած պայմաններ էին, իրեն աղբւրաց նկատմամբ՝ Մովսէս ինքնին կ'ըսէ թէ 'ի Հայաստան արքունի տարեգրութիւն չկայ, այլ յառանձին գաւառագտնուին դաշանց պատմական յիշատակարանք, որոնք տեղական պատմութե մանաւանդ քան թէ նախարարեան տանց կը վերաբերին։ Ով որ կ'ուզէր երկրին պատմութիւնը գրել՝ 'ի կառնորսն դիմելու էր առ ասորի և պարսիկ աղբւրս։ Զասոնք հայրենասէր և քրիստոնէական մտքնախաղաղեալ պատմագիր մը միայն չէր կրնար գործածել։ Որովհետեւ պարսկական էր կրօնականաշտից մատենագրութիւնն, և ասորի՝ նետտորականացն։ Կարելի չէր զանց ընել այսպիսի աղբւրի մը գործածութիւն, սակայն հարկ էր ըստ կարելոյն հիմամբ խախտել կամ բոլորովին ուրանալ։ Ահա Մովսէսի ըրածն ալ այս է։ Զիք տարակոյս թէ Ռաստհոհունէն, որ է բուն Բարսումայ գրիչ, ուղղակի (կամ Մար Աբասայ հատուածոյ մը միջնորդութեամբ, ենթադրելով թէ տակաւին Մար Աբաս իբր հաւաքատ գրիչ ապացուցուի) իրացընէ օգտուեր է, և անոր է գործոյն արժանայարգ մասն, մանաւանդ Պարթեաց վերաբերեալ կտորները։ Բայց ինքն ոչ թէ պարսիկ բնագրէ, այլ քրիստոնէայ դարձած Նիխազարին յոյն թարգմա-

նույնքան օգտուեր է։ Նոյնպէս իբրեւ աղբիւր Ուղիւս քրմին մեհնեական պատմութիւնը յիշատակէ, և իրաւ է որ խորենացի անոր նման մը դիմացը ունեցած է և անկէջ Հայոց հիթանու, օսական պատմութեան վրայ ամենա-դոյզը՝ բայց շատ արժանայարգ տեղեկութիւններ քաղեր է, զոր հիմայ ունինք ձեռուրնիս։ Բայց Մովսէս ասորի երկասիրութեան մը և քրիստոնեայ Բարդաժանէն շարունակածին յոյն թարգմանութիւնը կարգացեր է։ Ըստ իս այս յոյն աղբիւրներն Մովսէսի մը-տաց գիւտերն են, որովք իր քրիստոնեայ ընթերցողները կ'ուզէ հանդար-ժեցընել, որ հիթանոս աղբիւրներէ հա-նած պատմութիւնները անխիղճ կարե-նան կարգաւ, որովհետեւ Եղիս և Քրիս-տոնեայ բառերն՝ յայսմ իր երաշխա-ւոր են։ Ըստ այսմ է և ենթադրութիւնն ալ թէ Մար Աբաս Կատինայ իր բուն անհարազատ գործը յոյն միանգամայն և ասորի լեզուով շարադրեր է։ Որով հայ քրիստոնեայ պատմագիրն գործա-ծական աղբիւր՝ միայն Յոյներ կը մնան. և ահա Մովսէս ինքնին կ'ըսէ թէ ամ-բողջապէս ասոնցմէ հանած եմ։ Յայտ-նի է թէ պարսիկը և ասորիք աւելի տե-ղեակ էին Հայոց պատմութեան քան թէ Յոյքը։ Բայց տարակոյս չկար թէ Մովսէ-սի ժամանակն ալ կրնար յոյն մէկը Հայոց պատմութեան գոնէ արտաքին ձեւը յղկել կոկել, ինչպէս մեծք ալ հի-մայ կրնանք ընել։ Եթէ ընդունինք ալ թէ Մովսէս պատմական նիւթը առ-ձեռն և պատրաստ ունէր, սակայն միշտ տարակուսական է թէ կ'ուզէր խորե-նացի որ այն կերպով լմննայ իր գործն։ Հայոց նախնական պատմութե ամենա-համառօտ բայց հաւատարիմ հատուած մը բաւական պիտի ըլլար չափաւորա-գոյն անգամ մտքերուն ցուցնել, թէ քրիստոնէութիւնն Հայաստանի վախ-ճանին սկիզբն է եղեր։ Թէ անով ժողո-վուրդն ելաւ իր բնական վիճակէն. թէ ազնուականն իր նոր դաշնակից քա-հանայական դասուն հետ 'ի միասին ջանացաւ կործանել թագաւորական

իշխանութիւնը։ Թէ երկու դասին ալ Յունաց հետ ունեցած համախոհու-թիւնն պարսիկ կողմնակցութիւն մը հանեց երկրին մէջ, և Մասանեանց կա-կածանքն և մոլեռանդն հալածանքն զորոքեց, և երկու կողմնակցութեան նենգը և դարանք որ առ օտարս միշտ կը դիմէին՝ ուր ուրեմն 'ի կործանումն հա-սուցին հոյ անկախութիւնը։ Բայց պատմութիւն մը որուն բարոյականն յայն յանգէր, թէ Պարսից հետ անընդ-հատ կախումն ունենալ ամենափափու-քելին է Հայոց՝ Մովսէսի խորենացոյն շարադրածին ամեննին հակառակ կ'ը-լար։ Մանաւանդ թէ իր նպատակի ա-ւելի, յարմար էր քրիստոնէ տառվ պատ-մութեան, որ արդէն ռամկին մտքէն ելեր էր, ամենուն դիւրահասկընալի ա-ռասպելները պահել, և զանոնք թէպէտ 'ի բնէ իրանականը՝ պատմութիւն չի-նել և վաւերացնել իբրեւ հիթանոս աղ-բիւրներէ հանուած։ Այս նպատակին հասաւ խորենացի զանոնք յոյն և քրիս-տոնեայ անգամ հեղինակաց բերանը գնելով։ որոնք Մովսէսի ծանօթ էին Եւսեբիոսի եկեղեցական պատմութե-նէն։ Ափրիկանոս, Արիստո փեյլացի, Բարդաժան, փերմիլիանոս։ Մովսէսի պատարանքն իր գործոյն արտաքինն նկատմամբ միայն է և ոչ ներքինոյն. եւ թէ երբեմն աւելի օրտէ քան զոր կա-րեորն է իր նպատակին, լարծուն ճամ-բու մը մէջ քալելու բնական հետեանք է այն, և աւելք է սնապարծիլ հմտու-թեամբ իր ժամանակակցաց դիմացը, բայց բաւ իրին՝ կէս հմուտէն աւելի չէ։ Այն սնապարծութիւն որ ետեւ է վկա-յութիւններով և հեղինակաց տեղեկու-թիւններով պերճանալ որոնք ամենա-հմուտ վերձանեկեաց անգամ անձանօթ մնացին, շատ անգամ հին և սքանչելի մատենագրութե մը անկման և կամ նո-րոյ մը խեղճ սկզբնաւորութե ատեն կը գտնուի։ Այսպիսի միջոց մ'էր Մովսէսի գործոյն ատենն։ Գործն վկայութեանց հնարելուն և անոնց չարաչար կիրառու-թե նկատմամբ՝ կրնայ բաղդատիլ Հռա-ւեննայ աշխարհագրին գործոյն և Կո-

փրետոս Մոնմութի բրիտանական պատմութեան հետ : Եթէ խորենացին իրեն յանձնեալ գործն յաջողութեամբ գրել-խաւորեց, յայտնի է գործոյն ապագայ ունեցած մեծ յաջողութենէն : Այս յաջողութեան պատճառ, բաց 'ի գրութեան ոճոյն, եղաւ անոր միակ դիւան ըլլալն ազգային աւանդութեան և առասպելեաց՝ ուսկից հայ ժողովուրդն չէր կրնար ամենեւին հեռանալ, և կըրնայ հայ ազնուականաց ոսկեղինիկ մատեան համարուի : Խորենացւոյն այն չափ գովեալ Քաղբատունի նախարարութեան պատուի հասնելն, և անազան ուրեմն Հայոց և վրաց արքունի գահուն վրայ ալ բարձրանալն՝ շատ նպաստաւոր եղան այս երկասիրութեան, որ ինքնին շատ հարկաւոր պիտի ըլլար իրենց համար այն երկիրներու մէջ ուր կ'իշխէին :

Գանք հիմայ դիտենք իբրեւ պատմական աղբիւր՝ Մովսէսի Խորենացւոյ երկոցն գործնական օգուտն : Գործածեր է ընդհանրապէս հայ ժողովրդեան առասպելայօդ պատմութիւններն և հայ ազնուականին ընտանեկան աւանդութիւնները . իր գործոյն պատմական նիւթն ամբողջապէս պարսիկ և ուրիշ արեւելեան աղբիւրներէ կը բղխի . յոյն պատմական գործերն զիտցածներնէս աւելի չէ գործածած . Աստուածաշունչն, Յովսեպոս, Եւսեբիոսի Քրոնիկոնն և եկեղեցական պատմութիւն : Հաւանական է թէ դիմացն ունէր Յովհիսի Սփրիկանոսի բնագիրը, կամ թէ Ex-

cerpta latina barbari գործոյն նման երկասիրութիւն մը, բայց երկրորդաբար միայն գործածեր է : Գործածեր է դարձեալ Արքարու յօդուածոյ պատմութեան ընդարձակն, որ Աղգէի առաքելոյն ասորի վարդապետութիւնը կը բովանդակէր, Առաքելոց անհարազատ վկայաբանութիւններն, և Ագաթանգեղոսի հայերէնը, Ով որ կ'ուզէ զՄովսէս իբրեւ պատմագիր գործածել, պէտք է խզէ առասպելեալ վիպաց արտաքին կապը՝ զանոնք պատմութեան վերածելու համար, և հայ աւանդութեանց տեղեկանալու աղբիւր մը կ'ունենայ, ոչ ինչ այնչափ զարմանալի իր արտաքին . յարգար գեղեցիկ ձևովն : Զանազան աղբերաց մէկ տեղ խառնուրդն և առասպելեաց արտաքին ձևն դուրս հանելով, Խորենացւոյն շարունակ կրկնելը թէ ինծմէ բան չեմ հնարած, ճշմարիտ և ստոյգ կը համարիմ բուն պատմական նիւթոյն նկատմամբ ¹ :

Քարգմ. Հ. Ն. ԶՆՏՈՅԵԱՆ

¹ Ինչպէս խոստացանք այս խիստ քննադատութեանց (Թարգմանութեան սկիզբն, Ընանցիւնք և ըստ խոստման կատարել . տեղ տեղ սուղ ծանօթութեամբք ընդգիմաբանելով կարծեաց հեղինակին, տեղ տեղ ալ լուսաբանելով . գալ տեղամ համառօտիւ և ըստ մերումն ծանօթութեան կը հրատարակեմք մեր կարծիքը Խորենացւոյն պատմութեան գատառանին վրայ, և գատառատն ընողին տարապայման տեսութեանց վրայ :

